# Տեղեկանք
## 2016 թվականի գերակախնդիրների և միջոցառումների ծրագրի առաջին եռամսյակի իրականացման արդյունքների

| Գերակախնդիրների իրականացման արդյունքների վերաբերյալ | | | | |
|---|---|---|---|---|
| Պատասխանատու մարմինը | Ծրագրի կետը | Գերակախնդիրները | Գերակախնդրի կատարման ուղղված քայլերը | Կարծիք |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն | Հավելված N2<br><br>Կետ20. | **Համայնքների խոշորացման պիլոտային ծրագրերի շարունակականության ապահովում**<br><br>-խոշորացման գործընթացի կիրարկումն ապահովող անհրաժեշտ իրավական ակտերի մշակում<br><br>-այցելություններ պիլոտային ծրագրերում ներառված համայնքներ՝ տեղական ինքնակառավարման մարմինների և բնակչության հետ խոշորացման գործընթացի վերաբերյալ իրազեկող ու պարզաբանող բնույթի հանդիպումներ անցկացնելու նպատակով | Մշակվում է «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի համաձայն՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ, ՀՀ Արարատի մարզի Ուրցաձոր, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ, ՀՀ Շիրակի մարզի Ամասիա, Աշոցք, ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի, Գորայք, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք, Ջերմուկ համայնքներում համայնքների միավորման միջոցով ձևավորվելու են համայնքային փնջեր:<br><br>Նախարարության աշխատակիցների կողմից այդ համայնքներում իրականացվում են այցեր: Համայնքների բնակիչներին, տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրվում եր տեղեկատվություն՝ համայնքների խոշորացման նպատակների, առավելությունների, ռիսկերի վերաբերյալ: Վերէին հանվում | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | -պիլոտային ծրագրերում ներառված համայնքներում միասնական ցանցային կառավարման էլեկտրոնային համակարգերի ստեղծման աշխատանքների իրականացում: | և գույքագրում այդ համայնքների բոլոր հիմնախնդիրները՝ ըստ առաջնահերթության, հետագա ծրագրերում ընդգրկելու նպատակով:<br><br>Առանձին աշխատանքային խմբեր զբաղվում են խոշորացվող համայնքներում ընդհանուր տեղեկատվական ցանցի ստեղծման աշխատանքներով, ինչի նպատակն է՝ բնակիչների համար ստեղծել առավել նպաստավոր պայմաններ՝ տեղում ծառայություններից օգտվելու համար: | |